Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունման հիմնավորման մասին:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1660-Ն որոշմամբ «ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության գույքն օտարվել է «Ձորագետ Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ուստի անհրաժեշտություն է առաջացել լուծարելու «ՁորաՀԷԿ» ՓԲԸ-ն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծն ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերում փոփոխություններ կատարվելու մասին:

««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծն ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերում փոփոխություններ չեն կատարվելու:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծն ընդունելուց հետո լրացուցիչ ֆինանսական միջոցների և ՀՀ պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում փոփոխություններ կատարելու մասին:

««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծն ընդունելուց հետո լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում փոփոխություններ չեն կատարվելու:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի մասին շահագրգիռ պետական մարմինների դիտողությունների վերաբերյալ

Դիտողություններ և առաջարկություններ	**ՀՀ ՊՆ հիմնավորումը**
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն (Ելք 01/19.2/609-11, 28.02.2011թ.)	
ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություն չունի:	Ընդունվում է ի գիտություն:
ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (Ելք 11-4/111-11, 28.02.2011թ.)	
ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք՝ Նախագծում նշել. 1. ՓԲԸ լուծարման գործընթացն իրականացնող մարմինը: 2.Ինչ կարգով է լուծվելու պարտատերերի պարտքերի ստացման և այլ պահանջների կատարման հարցը: 3. Ում է փոխանցվելու դեբիտորական պարտքերի ստացման իրավունքը և լուծարումից հետո մնացած գույքի տնօրինումը:	Ընդունվում է ի գիտություն, կատարվել են համապատասխան լրացումներ:
ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն (Ելք Ե2-889, 01.03.2011թ.)	
ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք՝ 1.Հստակեցնել թե լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով որ պետք է ապահովի լուծարման հանձնաժողովի ստեղծումը և ում է վերապահվում ընկերության պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո նրա դեբիտորական պարտքերի ստացման իրավունքը:	Ընդունվում է ի գիտություն, կատարվել են համապատասխան լրացումներ:
ՀՀ ֆինանսների նախարարություն (Ելք 4/1-4-1-466, 28.02.2011թ.)	
ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք՝ 1.Նախագծի նախաբանի հղումը կատարել Օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներին և նախագծով հանձնարարել ՀՀ պաշտպանության նախարարին ստեղծելու լուծարային հանձնաժողով: Ընկերության պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո նրա դեբիտորական պարտքերի ստացման իրավունքը վերապահել ՀՀ ֆինանսների նախարարությանը: Ընկերության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը հանձնել ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության տնօրինմանը:	Ընդունվում է ի գիտություն, բացի վերջին առաջարկությունից, քանի որ գույքն ամբողջությամբ օտարվել է: Կատարվել են համապատասխան լրացումներ:

Դիտողություններ և առաջարկություններ	**ՀՀ ՊՆ հիմնավորումը**
ՀՀ արդարադատության նախարարություն (Ելք 01/1735-11, 24.03.2011թ.)	
ՀՀ Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություն չունի:	Ընդունվում է ի գիտություն: